ԵՂԵՌՆԻ ՋՈՀԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՈՏ

Միծեռնակաբերդի բարձունքում, որտեղից բացվում է նոր Երևանի հոյակապ համայնապատկերը, կանգնած է 1915 թվականի Եղեռնի զոհերի բազալտե կոթող-հուշարձանը, որի մոտ երկինք է խոյանում հայ ժողովրդի վերածնունդը խորհրդանշող հավերժայունը:



Ապրիլի 24-ին Սովետական Հայաստանի մայրաքաղաքի աշխատավորների հազարավոր ու հազարավոր ներկայացուցիչներ եկան այստեղ հարգելու իրենց ավելի քան մեկուկես միլիոն հայրենակիցների հիշատակը, որոնք 60 տարի առաջ դարձան Թուրքիայի այն ժամանակվա ռեակցիոն կառավարողների կազմակերպած գենոցիդի, հայերի մասսայական ցեղասպանության զոհը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, Սակկ լենինյան իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ հայ ժողովուրդը չկործանվեց, շանհետացավ: Այսօր սովետական հանրապետությունների եղբայրական ընտանիքում, առաջ մեծ ժողովրդի, սովետական բոլոր ժողովուրդների օգնությամբ, վերածնված հայ ժողովուրդը աննախընթաց հաջողություններ է ձեռք բերել կյանքի բոլոր ասպարեզներում և վստահորեն առաջ է ընթանում դեպի պայծառ ապագան՝ կոմունիզմ:

Առավոտյան ժամը 10-ին Միծեռնակարբերդ՝ Եղեռնի զոհերի հուշարձան այցելեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ղեկավարները:



ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և հանրապետության Մինիստրների սովետի անունից ծաղկեպսակ դրեցին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Դ. Ա. Աբրամանյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Պ. Պ. Անիսիմովը, Հ. Մ. Ոսկանյանը, Վ. Բ. Ղալումյանը, Ս. Ս. Թովմասյանը, կուսակցության Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Պ. Ղարիբջանյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածուներ Ռ. Ա. Աբրամանյանը, Ե. Թ. Ասծատրյանը, Հ. Վ. Թարջումանյանը: Նրանց հետ էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի և Մինիստրների սովետի նախագահի տեղակալները:

Հուշարձանին ծաղկեպսակներ դրվեցին նաև աշխատավորական կոլեկտիվների, գիտական, ուսումնական հաստատությունների, ստեղծագործական միությունների ու հասարակական կազմակերպությունների անունից:

Նույն օրը Երևանյան հանրապետության հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը:

Ժամը 19-ին հանրապետության աշխատավորները մեկ րոպե լռությամբ հարգեցին 1915 թվականի Եղեռնի զոհերի հիշատակը:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)